

**Տ. ԵԶՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՆՅԱՅՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(12 հոկտեմբերի 2003 թ.)

**«Ի սկզբանէ էր Բանն, և Բանն
էր առ Ասպուած, և Ասպուած
էր Բանն... Նովա կեսանք էր, և
կեսանքն էր լոյս մարդկան»:
(Դովի. Ա 1-2, 4)**

«Յանուն Նօր և Որդույ և Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Քերկարանքով անհուն առլեցուն հոգիս, երկնապարզ շնորհով պարզած անձս մղում են ինձ Բարձրայից շնորհափու բարյաց հայցելու համարձակություն բանալ զբերան մեր զոհություն և փառք օրիներգելու երկնային Նորը մեր, Որի կամոք մեծն Ռուսիայի հայոց թեմի ազնվասիրը, բարեպաշտ հայորդիք՝ նկեղեցական, ազգային, հասարակական, մշակութային կառույցի ներկայացուցիչներ, եկել են սիրո կարողը ծրարած իրենց սրբւրում, իրենց հոգևոր մոր՝ Ս. Էջմիածնի սիրաբաց գրկում, համախմբված ոչ միայն հազեցնելու պապակը, ծարավն իրենց որդիական սիրո, ոչ միայն վերանորոգելու ուխտն իրենց հավաքրի, այլ նաև որդիական սիրով, որդիական խոնարհությամբ բներելու իրենց անմնացորդ սերը, ամբողջական նվիրումը և հավաքարմությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնիս և երկրավոր Նոր՝ Հայրապետիս ազգիս Հայոց՝ Նորին Սրբություն Գարեգին Երկրորդին, միևնույն ժամանակ սրբագին, այն ազնիվ բարեմաղթանքներն ու ցանկությունները, որ ունենք մենք այս հոբեյանական քարվա ուրախ առիթով:

Սիրելի բարեպաշտ հայորդիք. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Ասպուած, և Ասպուած էր Բանն... Նովա կեսանք էր, և կեսանքն էր լոյս մարդկան»: Ձռող ներվի ինձ սուրբ գրական այս խոսքերի վերածնակերպմամբ ասելու համար. «Ի սկզբանն էր Էջմիածինը, Էջմիածինն էր առ Ասպուած, Էջմիածինն է կյանքը և Նրանով է լոյսը մարդկանց»: Ձռող այս խոսքերը մեղանչում ընկալվեն, որովհենքն մենք ներ ուխտի այն գիրակցությամբ, որ Հայոց երկրու Ասքծոն կամքով սուրբ լեռան վրա իշավ Նոյյան քապանը, և այս օրինակ երկիրը դարձավ նախահայրենիքը մարդկության: Տարիներ անց Հայոց հողում բարձրացավ երկրորդ Արարափը, ուր իշավ Միածինը Իր քապանով և կանգնեցրեց Ս. Էջմիածինը: Էջմիածինն, որը ոչ թե բարեղեն կառույցն է, այլ խորհուրդը մեր հայության, խորհուրդը մեր հավաքրի և հոգու, որ 17 դար մաքառել է, որը 17 դար մաքանչել է, որը 17 դար արարել է ու կերպել ի փառ Ասքծոն, ի պայծառություն հայոց ազգի ու երկրի:

Մենք գիրակցում ենք նաև, որ մեր համազգային մարմինը, որ ժողովուրդն է հայոց, ունի իր սիրփը՝ Հայրենիքը մեր, ազգայ Հայրենիքը, խկ այդ սրբի, այդ համազգային մարմնի

կենդանարար հոգին դա Արռող է այս սուրբ, Էջմիածինն է 1700-ամյա, առանց որի բարձիման՝ վրանգված է կյանքը հայության: Եվ բարազիր զավակունք մեր ժողովրդի այս զիգակցությամբ, այս համզումով ուր որ կայք են հաւաքարել, ապրել են այս հավաքարության մեջ, այս նվիրումի մեջ, որովհետք զիգակցել են, Մայր Արռո Ս. Էջմիածինը, որուն հոգևոր ծնող մեր ժողովրդի, չի հանդուրժի այն զավակների օտարացում, որոնք կայեն հոգևոր ծնող մեր ժողովրդի, չի հանդուրժի այն զավակների օտարացում, որոնք կարող են ինչ-ինչ շահերից դրդված, ցանկություններից մղված մոռանալ, ուրանալ իրենց մորոց: Եվ այս խորհրդի մեջ է մեր հարավության երաշխիքը որպես Առաքելահասպատ, Լուսավորչափեսիլ, Ասպվածահիմն Եկեղեցի՝ Ս. Էջմիածին Տաճարով:

Մենք զիգակցում ենք նաև, որ մեր ներկայիս կյանքը միահյուսված է Էջմիածնով, 1700-ամյա պարմությամբ մեր անցյալի բոլոր դրվագների ու ժամանակների հետ, որ այս սրբավայրից է մեր ազգին դրվել զիրը հայոց, որ այս սրբավայրով է Ասպված հայերն իսկուն Ասպվածաշունչ մագյանով, որ այս հավաքրի լոյս, կենարար աղբյուրից է ծնվել հայոց երգը, մշակույթը, պարմությունն այնպիսի անձերով, ինչպիսիք են Նարեկացի, Շնորհապի, Տաթևացի, Թորոս Ռուսին, Մոմիկ և, ինչու չէ, մեր այսօրվա մեծագոյն գործիքներ, ազգային բարերարներ ու հերոսներ, որոնք իրենց նվիրումով ու հավաքրով դարձել են մեր արժանապարփությունը, դարձել են ուղենիշը մեր կյանքի, որ ներդաշնակ հաջորդականությունն է, շարունակությունն է Ս. Էջմիածնի առաքելության:

Սիրելի հայորդիք, Էջմիածինը մեր ազգային ինքնության կերպարն է, Էջմիածինը խորհրդին է մեր հարավսության ու երաշխիքը մեր զոյլության: Եվ այս ամենը, սիրելիներս, միայն անցյալին ուրիշ չէ, որ քրիստոնեական հավաքրով այդ ոգին հայկան շաղափած այսօր բերել է մեզ այսպիս ոգեկոչելու, պանծացնելու, որովհետք մենք ենք այսօր մարմնավորողներն այդ ոգու, շարունակողները նրանց գործի և այսօրն է կանչում մեզ պարասիսնապարփության՝ մեր վերաբերմունքն ինչպիսին է լինելու հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, նրա կենտրոն Մայր Արռո Ս. Էջմիածինը, որքանով ենք մենք հետպնելու այս Ս. Սեղանից պարզամով, քարոզվող ավելարաբանական ճշմարդություններին, որ 1700 տարիներ ի վեր պարզամում է մեզ Ս. Սեղանն այս: Որքանով ենք մենք հավաքարիմ մնալու այս ովհսին, որովհետք այս Սեղանը չի քարոզել միայն այդ հավաքարմությունը, այսպիս պարզամով է մշխապես սեր առ հայրենին, որովհետք այդ սիրո մեջ է երաշխիքը մեր հայրենիքի շնության և այդ սերը, որպես հայրենասիրություն, քրիստոնեական ընկալումով փոխանցվում է նաև որպես մարդասիրություն, եղբայրսիրություն:

Ահա այս պարճառով մենք ունենալով առանձնակի ուրախությունը, որ այդ եղբայրսիրության, այդ մարդասիրության ոգին հարազարացրել է մեզ մեր քրիստոնյա հավաքակից եղբայր ոուս ժողովրդի հետ, որ մենք 100-ամյակներ ապրելով իրեն հավաքարիմ զավակները Ս. Էջմիածնի, իրեն նվիրյալ զավակները մեր ազգադ հայրենիքի, համարվելով ազնիվ քաղաքացիներն ու զավակները մեր երկրորդ հայրենիքի՝ կառուցում ենք, զորացնում ենք, շննացնում ենք եղբայրությունը մեր ժողովությունների և հայրենիքները մեր երկու:

Զինված ենք Ս. Էջմիածնի հավաքրով ու սիրով, որը 1700 տարիներ ի վեր ցըկ է խավարը մեր կյանքից, փարապել է մութն ու մշուշը մեր հոգիների և քանից նպաստել մեր հոգու պայծառակերպությանը: Եվ այդպիսի պայծառակերպության պահ է այսօր մեզ՝ Ռուսահայոց թեմիս հավաքացյալների համար, որ մղում է մեզ կրկին անզամ ասելու Ձարոր

լեռան վրա Պայծառակերպության ժամանակ հնչած ավելիքարանական խոսքը. «Բարոր է մեզ ասոք լինեք». տեսնել, գովեանդվել, լիցքավորվել, ներշնչվել Հայոց Հայրապեսի սիրոց ու նվիրումից, մեր հոգևոր եղայրների ծառայասիրությունից ու հավաքարմությունից, որպեսզի մենք կարողանանք արժանի ժառանգներն ու հետքնորդները կոչվելու մեր օրինյալ ազգի, մեր շնորհընկալ ազգի, մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Եվ այս առումով, սիրելի բարեպաշտ հայորդիք, աղոթք ենք վերառարում առ Բարձրյալ Տերը մեր, որ ամուր ու անսասան պատի Մայր Աթոռ Ս. Էջմիածնը, որովհետք կյանքն է նա մեր հայության, հոգին է մեր ժողովրդի և խավարացրիչ լույսն է մեր կյանքի:

Թող Ասդրված այս հավաքարմության մեջ, այս գիտակցության մեջ օրինի, զորացի մեզ ամենքիս այժմ և միշտ և հավիրյան, ամեն: